Աբովյանի թիվ 2 հիմն. դպրոց ՊՈԱԿ

2023-2024 ՈՒՍ.ՏԱՐԻ

Դաշնամուրի խմբակի ծրագիր

Շաբաթական՝ 2 ժամ

Տարեկան՝ 68 ժամ

Դասավանդող ուսուցչուհի՝Գոհար Ֆրանգուլյան

Բացատրագիր

Դաշնամուրը համարվում է երաժշտական նվագարանների արքան: Դաշնամուրի խմբակի պարապմունքների ընթացքում կզարգանան սովորողների երաժշտատեսական գիտելիքները նպաստելով «Երաժշտություն» առարկայի շրջանակներում ուսուցանվող նյութերի ավելի հեշտ ընկալելու, վերլուծելու և ներկայացնելու հմտությունների ձևավորմանը: Երաժշտատեսական **գիտելիքների** ձևավորումից հետո սովորողները կուսումնասիրեն տարբեր ժողովուրդների, ինչպես նաև հայ և արտասահմանյան կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունները, **հմտություններ** ձեռք կբերեն այդ ստեղծագործությունները կատարելու, իրենց իսկ անհատական զգացողությամբ (**դիրքորոշում**), որն էլ կձևավորի համապատասխան **արժեհամակարգ**: Խմբակի ուսումնական գործընթացը կապահովվի սովորողի մոտ ՀՊՉ-ի ութ հիմնարար կարողունակությունների ձևավորումն ու զարգացումը:

Գիտականորեն ապացուցված է, որ երաժշտական գործիքի վրա նվագելու ընթացքում զարգանում են սովորողի ուղեղի երկու կիսագնդերը, թե՛ տեսողական, թե՛ լսողական, թե՛ կատարողական և թե՛զգայական ոլորտները, ինչն էլ նպաստում է նրա բազմակողմանի զարգացմանը: Դաշնամուրի խմբակի պարապմունքներին կարող են մասնակցել բոլոր սովորողները առանց տարիքային սահմանափակման:

Նպատակներ	• Ծանոթացնել դաշնամուր երաժշտական նվագարանին: • ՈՒսուցանել երաժշտատեսական գիտելիքները դաշնամուրի վրա նվագելու հմտությունների ձևավորման համար: • Ձևավորել և զարգացնել կատարողական արվեստի ունակությունները՝ ճիշտ կեցվածքը, ազատ և անկաշկանդ կատարումը: • Ձևավորել հմտություններ հայ և արտասահմանցի կոմպոզիտորների դաշնամուրային մանրանվագները ճանաչելու, վերլուծելու և կատարելու համար: • Նպաստել սովորողի մոտ ազգային և համաշխարհային երաժշտարվեստը գնահատելու, արժևորելու և կրողն ու տարածողը լինելու կարողությունների զարգացմանը:
Խնդիրներս	• Ստեղծել բարենպաստ պայմաններ սովորողի ուսուցման համար : • Աշխատանքներ տանել տեսական գիտելիքների ճիշտ ընկալման և կիրառման ուղղությամբ: • Ուշադրություն դարձնել սովորողների ճիշտ կեցվածքի և ստեղծագործության կատարման վրա: • ՈՒղղորդել բարձրաժեք երաժշտական ստեղծագործությունները ունկնդրելու, ընկալելու և ներկայացնելու համար: • Սերմանել սեր և հարգանք դասական և ժողովրդական երաժշտության նկատմամբ:

Վերջնարդյունքներ	• Ճանաչի դաշնամուրի կառուցվածքը, ստեղնաշարը, ռեգիստրները, ութնյակները (օկտավաները) և այլն: • Կարողանա ընթերցել, մեկնաբանել և կատարել դաշնամուրային մանրանվագներ: • Ստեղծագործությունները կատարի ազատ, անկաշկանդ, բնույթին և տրամադրությանը համապատասխան: • Վերլուծի, արտահայտիչ կատարի և արժևորի հայ և արտասահմանցի կոմպոզիտորների դաշնամուրային մանրանվագները: • Ստեղծագործական մոտեցում ցուցաբերի, կարողանա յուրովի մեկնաբանել կատարվող ստեղծագործությունը արտահայտելով սեփական դիրքորոշումը :

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Պարապ մունք ների համարը	Թեմաների անվանումները	Օրացույց. ժամկետները
1 - 4	Ծանոթացում դաշնամուրի կառուցվածքին , ստեղնաշարին, ռեգիստրներին, նոտաներին և այլն:	4 ժ
5 - 8	Աշխատանք դաշնամուրի առջև ճիշտ նստելու,մատների, դաստակների, արմունկների, ուսերի դրվածքի վրա:	4 ժ
9 - 12	Ծանոթացում երաժշտական արտահայտչամիջոցներին:	4 ժ
13 - 18	Առանձին ձեռքերով դաշնամուրային մանրանվագների ուսուցում:	6 ժ
19 - 24	Դաշնամուրային մանրանվագների՝ էտյուդների, պիեսների ուսուցում երկու ձեռքերով:	6 ժ
25 - 30	Հայկական ժողովրդական երգերի և հայ կոմպոզիտորների մանրանվագների՝ <<Լորիկ>>, <<Կաքավիկ>> ուսուցում :	6 ժ
31 - 36	Արտասահմանցի կոմպոզիտորների մանրանվագների վերլուծություն և ուսուցում :	6 ժ
37 – 42	Ա.Խաչատրյանի <<Անդանտինո>> մանրանվագի ուսուցում համապատասխան հնչերանգով :	6 ժ
43 - 48	Վ.Ա.Մոցարտի <<Օրորոցային երգ>> մանրանվագի ուսուցում :	6 ժ
49 - 54	Ջ.Գերշվին << Փոքրիկ սևամորթը >> :	6 ժ
55-60	Պ.Չայկովսկի << Փոքրիկ կարապների պարը >> :	6 ժ
61 - 67	Կոմիտաս << Շուշիկի >> :	7 ժ
68	Տարեվերջյան հաշվետու համերգ:	1 ժ